Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր N 1

N ՀՀ ՆԳՆ ԳՀԱՊՁԲ-2026/Ա-40
ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան **<< >>. << >>. 2026թ.**

ՀՀ ներքին գործերի նախարարությունը, ի դեմս ՀՀ ներքին գործերի նախարարության գլխավոր քարտուղար Տ. Ենոքյանի, որը գործում է ՀՀ ներքին գործերի նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «Ավտոջան» ՍՊԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Տիգրան Մկրտչյանի (այսուհետ՝ Վաճառող), հիմք ընդունելով 18.05.2026 թվականին կնքված ՀՀ ՆԳՆ ԳՀԱՊՁԲ-2026/Ա-**40** գնման Պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 8.5 և 8.6 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը /այսուհետև՝ Համաձայնագիր/ հետևյալի մասին.

1.Համաձայնագրի առարկան, գինը, վճարման կարգը և գործողության ժամկետը

1.1 Սույն Համաձայնագրով Կողմերը համաձայնության եկան և հաստատեցին ՀՀ ՆԳՆ ԳՀԱՊՁԲ-2026/Ա-40 ծածկագրով գնման պայմանագրի շրջանակներում ապրանքների մատակարարման ժամկետները երկարաձգել 30 օրացուցային օրով:

1.2 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, աշխատանքի կատարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է ( ) էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

2.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ներքին գործերի նախարարությունը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ ներքին գործերի նախարարություն	**«Ավտոջան» ՍՊԸ**
ք. Երևան, Նալբանդյան 130	**ք. Երևան, Մալաթիա Սեբաստիա, Իսակովի 32**
ՀՀ Ֆինանսների նախարարության	**«Ինեկոբանկ» ՓԲԸ**
գործառնական վարչություն	**Հ/Հ 2050922342491001**
Հ/Հ 900011046373	**ՀՎՀՀ 02318204**
ՀՎՀՀ 02882913	**Հեռ: -093 81 96 97**
Հեռ. 010 59-61-52	**Էլ. Փոստ: autojantender@gmail.com**
Էլ. հասցեն՝ gnumner@mia.gov.am	
Ստորագրող ՏԻԳՐԱՆ ԵՆՈՔՅԱՆ 3408840229 2026-06-10 15:14:50 GMT+04:00 Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից	Ստորագրող ՏԻԳՐԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ 1902850351 2026-06-09 15:04:53 GMT+04:00 Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից
_____ Տ. Ենոքյան	Տ. Մկրտչյան
/ ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղար /	**(ստորագրություն)**
(ստորագրություն)	**Կ.Տ**
Կ.Տ	